ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի անվանումը	Գյուղատնտես
Դերը	Կազմակերպել և/կամ կառավարել աշխատանքները գյուղացիական տնտեսություններում, կազմակերպություններում կամ նրանց ստորաբաժանումներում: Ապահովել գյուղացիական տնտեսություններում տարբեր ստորաբաժանումների համագործակցությունը՝ ուղղված գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետ կազմակերպմանը՝ հաշվի առնելով տնտեսության ներքին հնարավորությունները, բնագավառի առանձնահատկությունները, տեխնոլոգիաները: Վերահսկել ամենօրյա աշխատանքները, հերթափոխի գրաֆիկները, առողջապահական չափանիշների պահպանումը և կատարել արդյունվետ խորհրդատվությունների ապահովում:
<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Աշխատանքների և արտադրության կազմակերպում, կառավարում:	
Աշխատանքային գործընթացը	▪ մշակում է աշխատանքային ընթացիկ և հեռանկարային պլանները, ▪ նախապատրաստում և կազմակերպում է գյուղացիական տնտեսության ստորաբաժանումների աշխատանքը, ▪ հսկում է իր ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքային գործունեությունը, ▪ մշակում է աշխատանքային մեթոդների և ձևերի կատարելագործմանն ուղղված ռազմավարություն
Կատարման չափանիշները	• կազմված են աշխատանքային և ընթացիկ հեռանակարային պլանները • սպասարկող անձնակազմի աշխատանքը ճիշտ է կազմակերպված, • ժամանակին տրված է համապատասխան հանձնարարականներ, • ճիշտ է բաշխված մարդկային ռեսուրսները և ժամանակը • աշխատանքը իրականացված է համաձային ամրագրված պայմանների
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Որակի հսկում	
Աշխատանքային գործընթացը	▪ հսկողություն է սահմանում արտադրության կազմակերպման մեթոդների/տեխնոլոգիաների, նկատմամբ՝ համոզվելու համար, որ աշխատանքները իրականացվել են սահմանված պահանջներին համապատասխան: ▪ հաշվարկում և աշխատանքներ են կատարվում համապատասխան քանակությամբ սերմեր, տնկանյութ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլ նյութեր ձեռք բերելու համար: ▪ վերահսկում է աշխատատեղերի սանիտարական նորմերը, աշխատակիցների կողմից հիգիենայի նորմերի պահպանումը, տնտեսությունում կիրառվող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների շահագործման և աշխատանքի անվտանգության կանոնների պահպանմումը: ▪ Իրականացնում է վերահսկում աշխատողների և նրանց կատարված աշխատանքների և սպասարկման վերաբերյալ:
Կատարման չափանիշները	• պահպանված է աշխատատեղերի սանիտարական նորմերը, • ձեռք են բերված և պահեստավորված անհրաժեշտ նյութերն ու միջոցները, • ապահովված է աշխատակիցների կողմից հիգիենայի նորմերը, • տնտեսությունում կիրառվող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների շահագործման, պարարտանյութերի և թունաքիմիկատների հետ աշխատելու ժամանակ, աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումը • աշխատողներն իրականացնում են աշխատանքներն իրենց համար նախատեսված և ներկայացված պահանջներին համապատասխան

Խնդիրների բնագավառ 3. Մշակաբույսերի մշակության աշխատանքների կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	▪ կազմակերպում է հողի նախապատրաստական աշխատանքները ▪ կազմակերպում է արդյունավետ տեխնոլոգիական մեթոդներով սերմերի ախտահանման գործընթացը ▪ հետևում է սերմերի ցանքսի գործընթացին ▪ կազմակերպում է ոռոգման աշխատանքները ▪ վերահսկում է սածիլների տնկման աշխատանքները ▪ իրականացնում է վերահսկում սածիլների, տնկիների, մշակաբույսերի խնամքի, ոռոգման, կանխարգելիչ աշխատանքների իրականացման գործընթացներին ▪ Կազմակերպում է պարարտացման և վնասատունների դեմ պայքարի միջոցառումները ▪ Ընտրում անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և հսկում նրանց աշխատանքը ▪ Կազմակերպում է բերքահավաքի աշխատանքները, պահեստավորումը և իրացումը
Կատարման չափանիշները	• հողը հերկված է, ակոսները հանված են և պատրաստ ցանքսի և սածիլման գործընթացին • սերմերը ախտահանված են • ցանքսը, սածիլման աշխատանքները և տնկիների տեղափոխումը կատարված է • հողատարածքը ոռոգված է, կատարված են բոլոր կանխարգելիչ աշխատանքները • կատարված են պարարտացման և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները • ընտրված են բերքահավաքի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, բերքահավաքի ժամկետները • կատարված է բերքահավաքը, պահեստավորումը և իրացումը
Խնդիրների բնագավառ 4. Մարդկային ռեսուրսների կառավարում	
Աշխատանքային գործընթացը	▪ պատրաստում և վերահսկում է աշխատակիցների աշխատանքային գրաֆիկը ▪ կատարում է աշխատանքի բաժանում և սահմանում է աշխատավարձը ▪ վերահսկում է աշխատակիցների աշխատանքը և հարթում կոնֆլիկտները աշխատակազմի ներսում, ▪ ներդնում է մոտիվացիոն համակարգ ▪ կազմում է հաստիքների ցանկը ▪ իրականացնում է աշխատակազմի վերապատրաստում
Կատարման չափանիշները	• ճիշտ է մշակված ստորաբաժանման աշխատակիցների գործառույթները. • ճիշտ է մշակված ստորաբաժանման աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները. • ճիշտ է կատարված աշխատանքի բաժանումը. • աշխատակիցների աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է համաձայն ներդրված չափանիշների. • բախումների իրավիճակի հարթման համար ճիշտ լուծումներ է առաջարկված և հակացությունները կարգավորված են. • խնդրի լուծման առանձնահատկությունից ելնելով՝ կայացված է կառավարչական և մասնագիտական ճիշտ որոշումներ.
Խնդիրների բնագավառ5. Ֆինանսական վերլուծություն և հաշվետվություններ	
Աշխատանքային գործընթացը	▪ կատարել տնտեսական գործնեության վերլուծություն և ռիսկերի գնահատում; ▪ կազմել բյուջեն և ներկայացնել ղեկավարին հաստատման : ▪ կատարել ստացված արտադրանքի և ծախսերի գնահատում, վերանայել և որոշել առանձին արտադրանքի հետագա արտադրության նպատակահարմարությունը:

Կատարման չափանիշները	• ճիշտ է գնահատված և բաշխված ստորաբաժանման ռեսուրսները, բյուջեն համաձայնեցված է ղեկավարության հետ և հաստատված է: • ծախսերը կատարվում են ըստ բյուջեի: • կատարված է արտադրանքի և ծախսերի հաշվառում, կազմված են հաշվետվություններ:
<u>Խնդիրների բնագավառ 6.</u> Մարքեթինգ և կապ հանրության հետ:	
Աշխատանքային գործընթացը	▪ կազմակերպում է ապրանքատեսակների ցուցադրման և վաճառքի համար անհրաժեշտ միջոցառումներ ▪ մշակում է ապրանքի ցուցադրում, իրացման մեթոդներ և վաճառքի վերահսկման համակարգեր
Կատարման չափանիշները	▪ իրականացված են ապրանքատեսակների ցուցադրման և վաճառքի արդյունավետ միջոցառումներ
<u>Խնդիրների բնագավառ 7.</u> Բանակցությունների տեխնիկա	
Աշխատանքային գործընթացը	• վարել բանակցություններ մատակարարող, սպասարկող և պատվիրատու կազմակերպությունների հետ • համագործակցել և կնքել պայմանագրեր
Կատարման չափանիշները	• մատակարարող, սպասարկող և պատվիրատու կազմակերպությունների հետ վարած բանակցություններն արդյունավետ են • համագործակցությունը հաստատված է, և պայմանագրերը կնքված և ներկայացված են ղեկավարին հաստատման:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճան	Միջին
Պատասխանա-տվությունը	Գյուղատնտեսը պատասխանատու է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ճիշտ կազմակերպման, պահպանման, մարդկային ռեսուրսների կառավարման, անվտանգության և կոնֆլիկտների քաղաքավարի լուծման համար: Պատասխանատու է իր հետ աշխատող անձնակազմի անվտանգության, ինչպես նաև նրանց աշխատանքի ճշգրիտ կազմակերպման համար: Գործում է ինքնուրույն կամ տնտեսության ղեկավարի ենթակայության ներքո, նրա բացակայության դեպքում գործում է ինքնուրույնաբար: Բոլոր պարտականությունները կատարում է գյուղատնտեսին ներկայացվող պահանջներին համապատասխան: Խնդիրների ծագման դեպքում հիմնականում ընդունում է ինքնուրույն որոշումներ:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	• Հայերեն՝ գերազանց • Առաջին օտար լեզու՝ C1 • Երկրորդ օտար լեզու՝ B2
Համակարգիչը	• MS Word՝ լավ • MS Excel՝ լավ • Internet Explorer՝ լավ
Գիտելիքը	• Վարչարարություն և կառավարում • Արտադրության պլանավորում • Գնումներ • Աշխատակազմ և մարդկային ռեսուրսներ • Վաճառք և մարքեթինգ • Բանակցությունների վարում • Մաթեմատիկա • Արտադրանքի որակի բարելավում • Հիգիենա. • Կրթություն և վերապատրաստում • Ռազմավարական պլանավորում • Հասարակական անվտանգություն

Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը	**Գործարարության կառավարում.** գործարարության ղեկավարման համար պահանջվող գործիքների և նրբությունների իմացություն՝ էֆեկտիվ գործընթաց և եկամուտ ապահովելու համար։ **Որակի վերահսկման վերլուծություն.** Ստուգել արտադրանքի ստացման գործընթացները՝ գնահատելու համար որակը կամ արդյունավետությունը։ **Տրամաբանում և որոշման կայացում.** օգտագործելով տրամաբանությունը և բանականությունը՝ տարբերակել խնդիրների այլընտրանքային լուծումների, բխող հետևությունների կամ մոտեցումների ուժեղ և թույլ կեղմերը։ **Ուսուցում.** սովորեցնելու կարողություն **Ժամանակի կառավարում.** ճշգրտորեն կառավարել սեփական ժամանակը։ **Մոնիտորինգ.** վերահսկել և գնահատել սեփական, այլ անձանց կամ կազմակերպությունների գործողությունները՝ բարելավումներ կամ ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար։ **Օտար լեզու.** ադյունավետ կերպով հաղորդակցվել օտար լեզվով (գյուղատնտեսության ոլորտում ամենակիրառելին)։ **Կառավարման կամ հաստիքային ռեսուրսներ.** աշխատակիցներին դեպի աշխատանք ուղղորդելը, նրանց կատարելագործելը և ուղղություն տալը՝ ճանաչելով լավագույն աշխատողներին։ **Համակարգչային և ինտերնետային հիմնական գիտելիքներ**. հաճախ կիրառվող համակարգչային ծրագրերի՝ Microsoft Word, Excel, իմացություն, ինչպես նաև բավականաչափ գիտելիք օգտագործելու համար ինտերնետը՝ որպես փնտրման համակարգի միջոց։ **Մարդկանց ընկալելու ունակություն.** ուշադրություն դարձնել մարդկանց արձագանքներին և փորձել ըմբռնել դրանց պատճառները։ **Ինդուկտիվ դատողություն.** հատուկ խնդիրների լուծման համար կարողանալ կիրառել համընդհանուր օրենքներ՝ իմաստալից լուծումներ գտնելու նպատակով։

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագետի «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության «Գյուղատնտես» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեսթային հարցման միջոցով։ Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուր թվով 20 հարցից։

   Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին։
2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է առաջադրված սպասարկման կոնկրետ ձեռնարկության կամ ծառայություններ մատուցող կազմակերպության օրինակով (բազայի վրա) մեկ-երկու շաբաթվա ընթացքում կատարել նշված գործողությունները՝
   - կազմել որևէ մշակաբույսի արտադրության համար պլան .
   - որոշել ըստ հողատարածքի մակերեսի սերմի (տնկանյութի) անհրաժեշտ քանակը.
   - որոշել պարարտանյութերի և թունաքիմիկատների քանակը
   - դասակարգել ագրոտեխնիկական գործընթացները
   - ընտրել տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ և կազմել ագրեգատներ
   - որոշել բերքահավաքի ժամկետները, ընտրել բերքի փաթեթավորման և տեղափոխման տեխնիկական միջոցները

- կազմել և լրացնել սպառող կազմակերպությունների հետ պայմանագրերի ձևեր
- արձանագրել որևէ բանակցային գործընթաց.
- մասնակցել կոլեկտիվում որևէ կոնֆլիկտի (անհամաձայնություն, վիճաբանություն, տարակարծություն) հանգուցալուծմանը.
- ներկայացնել կարծիք տնտեսության աշխատակազմի վարվելակերպի վերաբերյալ.
- վերլուծել տնտեսության վերջին մեկ տարվա տնտեսական գործունեության արդյունքները և տալ առաջարկներ շահութաբերությունը բարձրացնելու վերաբերյալ.
- գնահատել տնտեսության աշխատանքի արդյունավետությունը.
- վերանշյալ գործողությունների իրականացման ընթացքում ցուցաբերել համակարգչային տեխնիկայից և ինտերնետային կապից վարժ օգտվելու հմտություններ, ինչպես նաև ռուսերեն և որևէ այլ օտար լեզվով հաղորդակցվելու կարողություն։

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշների համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները։